ԾԱՂԻԿՆԵՐՍ

Զոնված Վազգեն Ա. Կաթողիկոսի անթառամ հիշատակին

Իմ պարտեզի ծաղիկների
Փունջ եմ կապել
Եվ բերել եմ քո շիրիմին
Իբրև ընծա:
Չէիր ասել դու այս կյանքում
Մի խոսք անգամ
Իմ պարտեզի ծաղիկներից
Մասին երբեք:

Մի օր, երբ քեզ մատուցեցի
Նոր ծաղիկներն իմ պարտեզի,
Օրեր հետո ակնարկեցիր՝
Թե «մեծերի հետ ե՞ս չափվում»:
Այն ժամանակ չհասկացա
Իմ լաածը և ասացի.
«Ինձ քավ լիցի հազար անգամ,
Մեր մեծերից՝ ներողություն»:

Երբ պարտեզումս ծաղիկ բացվի,
Ասա՛, ինչպե՞ս չնվիրեմ
Ծաղիկներն իմ ուրիշներին,
Ծաղկով ծաղկանց ողջագուրեմ...

22.01.1995 թ.